# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

## N ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-22/24

ք. Երևան «11» փետրվարի 2022 թ.

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմը՝ ի դեմս աշխատակազմի ղեկավար–գլխավոր քարտուղար Վահան Նարիբեկյանի, ով գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՀԱՅՐ ԵՎ ՈՐԴԻ ԵՐԵՄՅԱՆՆԵՐ» ՍՊԸ ն՝ ի դեմս գլխավոր տնօրեն Դավիթ Երեմյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է պաշտոնական պատվիրակությունների ընդունելության համար հյուրասիրության կազմակերպման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ Ծառայություն)՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է Պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը Պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է Պայմանագիրը: Կատարողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը` ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված Ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով` նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով Ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված` Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն`

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված Ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված Ծառայությունը համարվում է ընդունված և Պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության առավելագույն գինը կազմում է 5000000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը` այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ` դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա` Պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

### 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման` Պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքը հաշվարկվում է նաև Ծառայությունը Պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն Պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

### 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով և Պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

### 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում Պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ Պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում

Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով Պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում, իսկ եթե Պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.5 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել Ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան Պայմանագրով ի սկզբանե Ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան Պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.6 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.7 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.8 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը՝ Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.9 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.10 Պայմանագիրը կազմված է **5** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

7.11 Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ ԱԺ աշխատակազմ<br>ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19<br>ՀՎՀՀ 00008519<br>ՀՀ ՖՆ գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011020089<br>ՀՀ ԱԺ աշխատակազմի<br>ղեկավար – գլխավոր քարտուղար՝<br>Վահան Նարիբեկյան | «ՀԱՅՐ ԵՎ ՈՐԴԻ ԵՐԵՄՅԱՆՆԵՐ» ՍՊԸ<br>ՀՎՀՀ 01557735<br>Արդշինբանկ ՓԲԸ<br>Հ/Հ՝ 2470063177280020<br>Գլխավոր տնօրեն՝<br>Դավիթ Երեմյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված N 1*
*«11» Փետրվարի 2022թ. կնքված*
*ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-22/24 ծածկագրով պայմանագրի*

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | Չափման միավորը | ընդհանուր գին/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման հասցեն | մատուցման Ժամկետը** |
| 1 | 79111200/1 | Պատվիրակության անդամների համար կազմակերպվելիք պաշտոնական հյուրասիրությունը պետք է ներառի<br>1. Սառը խորտիկներ,<br>2. Աղցաններ,<br>3. Տաք խորտիկներ,<br>4. Ապուրներ,<br>5. Տաք ուտեստներ,<br>6. Խավարտներ,<br>7. Ալկոհոլային խմիչքներ,<br>8. Կոկտեյլներ,<br>9. Տաք ըմպելիքներ,<br>10. Զովացուցիչ ըմպելիքներ (նաև բնական),<br>11. Աղանդ- եր (խմորեղեն),<br>12. Միրգ։<br>Վերջնական պատվերը համաձայնեցվում է պատվիրատուի հետ։ Ցանկի բացվածքը ներկայացված է կից ցանկում։ | դրամ | 439560 | 1 | ք. Երևան, Թումանյան 21, 22 տարածք | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.12.2022թ. |
| 2 | | | | 557120 | | ք. Երևան, Տերյան 91/1 | |
| 3 | | | | 557120 | | ք. Երևան, Պարոնյան 7, 58 տարածք | |
| 4 | | | | 557120 | | ք. Երևան, Խորենացու 29/2 | |
| 5 | | | | 557120 | | ք. Երևան, Ամիրյան 5, 26 տարածք | |
| 6 | | | | 557120 | | ք. Երևան, Տերյան 91/1 | |
| 7 | | | | 621950 | | ք. Երևան, Ամիրյան 1 | |
| 8 | | | | 574710 | | ք. Երևան, Իսակովի 48 | |
| 10 | | | | 371110 | | ք. Երևան Պուշկինի 51շ, 27,30 | |
| 11 | | | | 424600 | | ք.Երևան, Ծիծեռնակաբերդի գբոսայգի 1 | |

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը։*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ ԱԺ աշխատակազմ
ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19
ՀՎՀՀ 00008519
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011020089
ՀՀ ԱԺ աշխատակազմի
ղեկավար – գլխավոր քարտուղար՝
Վահան Նաիրիևյան

(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
«ՀԱՅՐ ԵՎ ՈՐԴԻ ԵՐԵՄՅԱՆՆԵՐ» ՍՊԸ
ՀՎՀՀ 01557735
Արդշինբանկ ՓԲԸ
Հ/Հ՝ 2470063177280020
Գլխավոր տնօրեն՝
Դավիթ Երեմյան

(ստորագրություն)
Կ.Տ.

«Պանդոկ Երջան գետափին»

ՀՀ դրամ

| | |
|---|---|
| **ՍԱՌԸ ԽՈՐՏԻԿՆԵՐ** | |
| Ղավուրմա | 3960 |
| Կծու Չիզ | 1210 |
| Հումուս կարմիր պղպեղով | 1430 |
| Մսի տեսականի «Ֆիրմային» | 4400 |
| Ապխտած խոզի ֆիլե | 2860 |
| Պանրի տեսականի «Գյուղական» | 1980 |
| Պանրի տեսականի գինու հետ | 6600 |
| Թթվի տեսականի «Տնական» | 1320 |
| Սև ձկնկիթ | 71500 |
| Կարմիր ձկնկիթ | 6600 |
| Ձկան տեսականի | 9350 |
| Ձկան տեսականի «Հայկական» | 8250 |
| Բանջարեղենի տեսականի | 2860 |
| Թարմ կանաչեղեն | 1320 |
| Բադրիջանով | 1650 |
| Չիբապտուղ | 990 |
| Կիտրոն | 660 |
| Ռեժան | 990 |
| Քամած մածուն | 880 |
| Հաց | 440 |
| Հումուս | 1210 |
| Մութաբալ | 1320 |
| **ԱՂՑԱՆՆԵՐ** | |
| Բազուկ մոցարելլայով | 1760 |
| Հունական աղցան | 2640 |
| Քաղցր թաբուլե | 1540 |
| Արցախ | 2200 |
| Կեսար | 2750 |
| Գալերեա | 1540 |
| Ամառային | 1100-1760 |
| Լցոնած սմբուկ | 2090 |
| Ավելուկով աղցան | 1100 |
| Կարմիր լոբով աղցան | 880 |
| Սմբուկով ու բուլղարական պղպեղով աղցան | 1870 |
| Մսով ու ավելուկով աղցան | 2200 |
| Բանջարեղենային աղցան ֆետա պանրով | 1980 |
| Միջօրե | 2200 |
| Բրոկկոլիով ու սնկով աղցան | 1760 |
| **ԱՊՈՒՐՆԵՐ** | |
| Սոլյանկա | 1650 |
| Կարմիր լոբով ապուր | 1210 |
| Հավի թևիկներով թանձրուկ | 1100 |
| Կոլոլակով և մածունով ապուր | 1980 |
| Խարչո | 1540 |
| Հարիսա | 1100 |
| Դդումով ու կարմիր լոբով ապուր | 1540 |
| Չանախ | 1650 |

| | |
|---|---|
| Ավելուկով ապուր | 990 |
| Սպաս | 880 |
| Բորշչ | 1210 |
| Խաշ | 2750 |
| **ՏԱՔ ՈՒՏԵՍՏՆԵՐ** | |
| Հորթի թիակ հաճարի փլավով | 28600 |
| Թարխունով գառան թիակ | 9900 |
| Ձեռոցում տապակած հորթի մատներ | 6600 |
| Գառան մատներ չալաղաջով | 10450 |
| Տավարի տժվժիկ | 2090 |
| Գառան տժվժիկ | 2090 |
| Թավա խորոված | 3850 |
| Խաղողի թփով տոլմա | 2420 |
| Կաղամբով տոլմա | 2420 |
| Տավարի մատներ նոր մաղադրատոմսով | 28600 |
| Քյուֆթա | 2640 |
| Իշլի քյուֆթա | 2860 |
| Թավա Տոլմա | 20350 |
| Ձավախք | 2420 |
| Ղափամա | 22000 |
| Խուրջին | 5500 |
| Տավարի մատներ գազարի և կարտոֆիլի խյուսով | 7150 |
| Քարահունջ | 8800 |
| Տնական աքլորը մրնձով | 9900 |
| Հորթի խաշլամա նորովի | 3520 |
| Ճուտ տապակած փքված կարտոֆիլով | 2750 |
| Տապակած սունկ կարտոֆիլով | 1210 |
| Օջախուրի | 2530 |
| Փքված կարտոֆիլ | 1540 |
| **ԽՈՐՈՎԱԾ** | |
| Խոզի մատներ խորոված | 3740 |
| Խոզի չալաղաջ խորոված | 3960 |
| Գառան մատներ խորոված | 3850 |
| Գառան խորոված | 3520 |
| Խոզի վիզ խորոված | 3850 |
| Խոզի փափուկ խորոված | 3520 |
| Տավարի լեզու խորոված՝ հատուկ մաղադրատոմսով | 2420 |
| Հորթի խորոված | 3960 |
| Տավարի սուկի խորոված | 4400 |
| Գառան չալաղաջ խորոված | 4180 |
| Հավի խորոված | 2310 |
| Էրեբունի | 2200 |
| Բանջարեղեն խորոված | 1650 |
| Սունկ խորոված | 1320 |
| Կարտոֆիլ խորոված | 660 |

| | |
|---|---|
| Սուլուգունի պանիր խորոված | 1430 |
| Տավարի քյաբաբ | 1320 |
| Հավի քյաբաբ µ | 1100 |
| Գառան քյաբաբ | 1540 |
| Իշխանի քյաբաբ | 2200 |
| Գառան մշո քյաբաբ | 1870 |
| Տավարի մշո քյաբաբ | 1540 |
| **ԹՈՆԻՐ** | |
| Թոնրի խորովածի տեսականի | 25410 |
| Գառան վիզ թոնրում | 4400 |
| Խորվու (1 մաժին) | 3850 |
| Թոնրի գառ հատուկ պատվերով | 33000 |
| **ՁԿՆԱՅԻՆ ՈՒՏԵՍՏՆԵՐ** | |
| Թառափ (ստերլետ) խորոված (2 կտոր) | 4070 |
| Կարմրախայտ ջերմուկի շոգեխաշած | 3960 |
| Թառափ (ստերլետ) խորոված (1 կգ) | 11000 |
| Իշխան շոգեխաշած (1 հատ) | 3960 |
| Գաթա-իշխան խորոված (1 կգ) | 7700 |
| Գաթա-սիգ խորոված (1 կգ) | 8250 |
| **ԽԱՎԱՐՏՆԵՐ** | |
| Լոլիկով ձվածեղ | 1210 |
| Կանաչ ոլոռով ձվածեղ | 1650 |
| Ականիկ | 770 |
| Բաստուրմայով ձվածեղ | 1760 |
| Կանաչ ոլոռ | 1320 |
| Տապակած սպանախ | 1980 |
| Տապակած մանդակ | 2420 |
| Տապակած սիբեխ | 2420 |
| Տապակած շուշան | 2420 |
| Տապակած կանաչ լոբի | 1650 |
| Սնկով, հաճարով փլավ | 1430 |
| Կարտոֆիլ խյուս | 770 |
| Արիշտա | 1100 |
| Բրինձ | 770 |
| Հնդկաձավար | 770 |
| **ԱՂԱՆԴԵՐ** | |
| Թոնրի գաթա | 1980 |
| Գինեսի Ռեկորդակիր Գաթա | 1540 |
| Գավառական փախլավա | 1320 |
| Ֆիրմային փախլավա | 1320 |
| Մրգի տեսականի «Էկզոտիկ» | 7700 |
| Մրգի տեսականի «Ամառային» | 6600 |
| **ԶՈՎԱՑՈՒՑԻՉ ԸՄՊԵԼԻՔՆԵՐ** | |
| Աղբյուրի ջուր | 390 |

| | |
|---|---|
| Հանքային ջուր | 390 |
| Պեպսի | 390 |
| Վրացական լիմոնադ | 660 |
| **Ընդամենը** | **574710** |

«Լավաշ»

ՀՀ դրամ

| ՍԱՌԸ ԽՈՐՏԻԿՆԵՐ | |
|---|---|
| Մսի տեսականի ,Ֆիրմային | 5390 |
| Ձկան տեսականի | 9350 |
| Հայկական ձկան տեսականի | 8250 |
| Ղավարմա | 4400 |
| Պանրի տեսականի | 3080 |
| Բանջարեղենային սառնուտեստ | 1980 |
| Գյուղական պանիր | 2310 |
| Բանջարեղենի տեսականի | 3300 |
| Պանրի տեսականի գինու համար | 7150 |
| Կծու Չիզ | 1210 |
| Մարինացված կարմիր պղպեղ | 1100 |
| Տնական թթու | 1540 |
| Քամած մածուն | 1100 |
| Ռեժան | 1100 |
| Ձիթապտուղ | 1100 |
| Ընկույզով պաշտետ | 1760 |
| Թարմ կանաչի | 1540 |
| Կիտրոն | 660 |
| Հաց | 440 |
| **ԱՂՑԱՆՆԵՐ** | |
| Բրոկոլիով և սնկով աղցան | 1980 |
| Սմբուկով աղցան թարխունի սոուսով | 2750 |
| Լցոնած սմբուկ | 2200 |
| Ասիական աղցան | 2420 |
| Ոլորան | 2200 |
| Հունական աղցան | 2750 |
| Բուրատա պանիր կառամելացված մրգով | 5280 |
| Հայաստան աղցան | 2420 |
| Կովսական աղցան | 2420 |
| Հունական աղցան խաղողով | 2750 |
| Ավելուկը մածունով | 1430 |
| Միջօրե | 2310 |
| Կեսար աղցան | 2970 |
| Կեսար աղցան սաղմոնով | 4400 |

| | |
|---|---|
| Մոցարելա բազուկով և մեղրային սոուսով | 3080 |
| Միքս աղցան | 2420 |
| Ավելուկով աղցան | 1210 |
| Ամառային աղցան | 1210-1980 |
| **ԱՊՈՒՐՆԵՐ** | |
| Նռանե | 1760 |
| Դդումով կրեմ-ապուր | 1540 |
| Սնկով կրեմ-ապուր | 1760 |
| Դդումով և կարմիր լոբով ապուր | 1540 |
| Սիբիրյան ապուր | 1320 |
| Ավելուկով ապուր | 1100 |
| Սոլյանկա | 1760 |
| Հավով ապուր | 1100 |
| Հարիսա | 1320 |
| Լոբով ապուր | 1100 |
| Չանախ | 1650 |
| Բորշչ | 1540 |
| Սպաս | 990 |
| **ՏԱՔ ՈՒՏԵՍՏՆԵՐ** | |
| Հորթի թիակ հաճարի փլավով / 1կգ | 12650 |
| Հորթի չալաղաջ արիշտայով | 16500 |
| Սնկով և հաճարով փլավ | 1650 |
| Գառան թիակ (մասնատված) | 13200 |
| Գառան թիակ հաճարի փլավով | 8250 |
| Քարահունջ | 7700 |
| Շարան | 4400 |
| Լավաշ | 6600 |
| Խուրջին | 5500 |
| Հորթի խաշլամա նորովի | 3850 |
| Հորթի մատներ կանաչիի սոուսով | 4950 |
| Տապակա խոզի մսով և բանջարեղենով | 2530 |
| Ջեռոցում տապակած հորթի մատներ | 6050 |
| Ավան | 6600 |
| Տավարի տժվժիկ | 2200 |
| Գառան տժվժիկ | 2200 |
| Էրզրումի ղափամա (փոքր) | 3960 |
| Լավաշով ղափամա (փոքր) | 3520 |
| Թավա քյուֆթա | 2860 |
| Իշլի քյուֆթա | 3970 |
| Խաղողի թփով տոլմա | 2420 |
| Կաղամբով տոլմա | 2420 |
| Տապակած ճուտ | 2640 |
| Ժենգյալով հաց | 1320 |
| Տապակած սունկ կարտոֆիլով | 1430 |
| Խինկալի (4 հատ) | 1320 |
| Տապակած պելմենի ձվով | 1650 |

| | |
|---|---|
| Տապակած խինկալի (4 հատ) | 1540 |
| Պելմենի (10 հատ) | 1430 |
| Կանաչիով պելմենի | 2420 |
| **ՁԿՆԱՅԻՆ ՈՒՏԵՍՏՆԵՐ** | |
| Սաղմոնի սթեյք ռոքֆորի սոուսով | 7700 |
| Խորոված Սևանի սիգ (1 կգ) | 8800 |
| Խորոված թառափ (ստերլետ) (1 կգ) | 11000 |
| Խրոված թառափ (ստերլետ) (2 կտոր) | 3960 |
| Շոգեխաշած Իշխան (1 ձուկ ) | 3960 |
| Ջերմուկի կարմրախայտ շոգեխաշած (1 ձուկ ) | 3960 |
| Լավաշով Գավառական իշխան | 3960 |
| Խորոված իշխան (1 ձուկ ) | 3960 |
| Սաղմոն կիտրոնի սոուսով | 8800 |
| **ԽՈՐՈՎԱԾ** | |
| Խոզի փափկամսի խորոված | 3740 |
| Խորոված խոզի վիզ | 3960 |
| Խորոված խոզի չալաղաջ | 4180 |
| Խորոված խոզի մատներ | 3960 |
| Տավարի սուկիի խորոված | 4950 |
| Էրեբունի | 2420 |
| Գառան չալաղաջ | 4400 |
| Գառան խորոված | 3520 |
| Հավի խորոված | 2420 |
| Հորթի խորոված | 4070 |
| Խորոված տավարի սիրտ, թոք | 2320 |
| Մշո քյաբաբ գառան | 1980 |
| Մշո քյաբաբ տավարի | 1760 |
| Խորոված կարտոֆիլ | 660 |
| Խորոված բանջարեղեն | 1650 |
| Խորոված սունկ | 1540 |
| Խորոված պանիր | 1540 |
| **ԽԱՎԱՐՏՆԵՐ** | |
| Ծնեբեկ | 7150 |
| Տապակած մանդակ | 2640 |
| Տապակած սիբեխ | 2640 |
| Բաստուրմայով ձվածեղ | 1650 |
| Ձվով տապակած կանաչ լոբի | 1760 |
| Ձվածեղ | 770 |
| Կանաչ ոլոռով ձվածեղ | 1540 |
| Լոլիկով ձվածեղ | 1320 |
| Արիշտա | 1100 |
| Կանաչ ոլոռ | 1540 |

| | |
|---|---|
| Յնդկածավար | 880 |
| Բրինձ | 880 |
| Կարտոֆիլի խյուս | 880 |
| ԱՂԱՆԴԵՐ | |
| Մրգի տեսականի | 8800 |
| Բասկյան տորթ շոկոլադե միջուկով | 1430 |
| Բասկյան տորթ մրգային միջուկով | 1430 |
| Գավառական փախլավա | 1320 |
| Միլֆեյ | 3080 |
| Ֆիրմային փախլավա | 1320 |
| Տնական հալվա | 1650 |
| Գինեսի ռեկորդակիր գաթա | 1540 |
| Պաղպաղակ ,Լավաշե | 2530 |
| Շոկոլադե պաղպաղակ | 1430 |
| Շարոց | 1320 |
| Մուրաբա | 1430 |
| ԶՈՎԱՑՈՒՑԻՉ ԸՄՊԵԼԻՔՆԵՐ | |
| Նռան թարմ քամած հյութ | 3850-4950 |
| Թարմ քամած հյութեր (նարինջ, թուրինջ, կիտրոն, գազար, խնձոր) | 1100-2320 |
| Ֆիրմային լիմոնադ սափորով | 3850 |
| Ֆիրմային լիմոնադ | 1650-2200 |
| Մածնաբրդոշ սափորով | 1760 |
| Մածնաբրդոշ | 720 |
| Տնական թան սափորով | 1540 |
| Տնական թան 0.25 լ | 390 |
| Ֆիրմային կոմպոտ սափորով | 1650 |
| Ֆիրմային կոմպոտ 0.25 լ | 550 |
| Տոնիկ | 1320 |
| Պեպսի, Միրինդա, 7 Ափ | 390 |
| Աղբյուրի ջուր 0.33 լ | 390 |
| Հանքային ջուր 0.33 լ | 390 |
| **Ընդամենը** | **439560** |

**«Լիվինգսթոն»**

ՀՀ դրամ

| | |
|---|---|
| **Նախուտեստներ** | |
| Բանջարեղենի տեսականի թարթար սոուսով | 4950 |
| Մսի տեսականի | 9350 |
| Պանրի տեսականի | 8690 |
| Նյուաժ-մածուն | 4290 |
| Սև ձկնկիթ | 74800 |
| Բիֆ թարթար պարմեզանի կրեմով | 4950 |
| Թունայի տատակի յուզու սոուսով | 7480 |
| Սաղմոնի կարպաչչո պարմեզանի կրեմով | 6930 |
| **Աղցաններ** | |
| Թունայով և ավոկադոյով աղցան | 9350 |

| | |
|---|---|
| Մանրածովախեցգետնով աղցան ասիական սոուսով | 5940 |
| Սաղմոն գրավլաքս մարգարտե սոխով | 4840 |
| **Ապուրներ** | |
| Մածունի ապուր վարունգի սֆերայով | 2420 |
| Դդումով կրեմ-ապուր՝ պրոշուտտոյով | 2530 |
| **Տաք ուտեստներ** | |
| Գառը նեխուրի պարմանտիեով | 9680 |
| Սաղմոնի ֆիլե ծաղկակաղամբի պարմանտիեով | 11110 |
| Սև ֆիլե-մինյոն սոխի էսպումայով | 8140 |
| Սիգ մյուսլիի էսպումայով | 6050 |
| Բադի կոնֆի գետնախնձորի պարմանտիեով | 9020 |
| **Գրիլ Յոսպեր** | |
| Թունայի սթեյք | 13420 |
| Ծովախեցգետին | 11990 |
| Պրայմ Ռիբայ սթեյք | 24530 |
| Խոզի չալաղաջ | 7150 |
| Դորադո | 7920 |
| **Խավարտներ** | |
| Կանարյան կարտոֆիլ | 1430 |
| Վայրի բրինձ | 3190 |
| Ծնեբեկ | 7480 |
| **Աղանդեր** | |
| Պանա Կոտա ազնվամորու գրանիտեով | 8360 |
| Մրգի տեսականի | 16500 |
| Շոկոլադե սիգարներ | 4950 |
| **Ալկոհոլ** | |
| Օղի | |
| Բելուգա գոլդ 50մլ | 9900 |
| Գրեյ Գուս 50մլ | 3630 |
| Օհանյան Այս 50մլ | 1650 |
| Ֆինլանդիյա 50մլ | 1540 |
| Աբսոլյուտ 50մլ | 1540 |
| Արցախ ծիրանի 50մլ | 1760 |
| **Կոնյակ** | |
| Յեննեսի XO 50մլ | 17050 |
| Արարատ Շառլ Ազնավուր 50մլ | 15400 |
| Արարատ Դվին 50մլ | 7700 |
| Արարատ Ախթամար 50մլ | 2750 |
| **Գինի շիշ** | |
| Կուր | 10450 |
| Կատարո | 10450 |
| Կարաս | 8800 |
| Վան Արդի | 8250 |
| **Շամպայն** | |
| Կարաս էքստրա բրուտ | 11000 |
| **Գարեջուր** | |
| Դարգեթ/Յեինիկեն/Կորոնա | 1760 |
| **Տաք ըմպելիքներ** | |
| Թեյ ցիտրուսային/կոճապղպեղով 1լ | 3300 |
| Խոտաբույսերով թեյ | 1320 |
| Սուրճ ամերիկանո | 1320 |

| | |
|---|---|
| Արևելյան սուրճ | 770 |
| **Զովացուցիչ ըմպելիք** | |
| Աղբյուրի/հանքային ջուր | 550 |
| Պեպսի | 550 |
| Բնական հյութ | 770 |
| Թարմ լիմոնադ 1լ | 4950 |
| **Ընդամենը** | **424600** |

«Շերեփ»

ՀՀ դրամ

| **ՍԱՌԸ ԽՈՐՏԻԿՆԵՐ** | |
|---|---|
| Ձկան տեսականի | 9350 |
| Մսի տեսականի Ֆիրմային | 6050 |
| Ֆիրմային թթու | 3300 |
| Թթվի տեսականի | 2200 |
| Ղավուրմա | 4950 |
| Պանրի տեսականի գինու համար | 7150 |
| Գյուղական պանրի տեսականի | 3080 |
| Խոզի միսը ֆիրմային սոուսներով | 4400 |
| Կծու Չիզ | 1210 |
| Սուլուգունի ռոլ | 1320 |
| Բանջարեղենային սառնուտեստ | 1980 |
| Ոլորան | 2200 |
| Հումուս | 1540 |
| Բանջարեղենի տեսականի | 3520 |
| Թարմ կանաչի | 1540 |
| Ֆիրմային պանիր | 1540 |
| Կիտրոն, ձիթապտուղ | 2090 |
| Քամած մածուն վարունգով | 1100 |
| Հաց | 550 |
| **ԱՂՑԱՆՆԵՐ** | |
| Կեսար աղցան սաղմոնով | 4400 |
| Տորնեդոս ընկույզի սոուսով | 3740 |
| Կեսար աղցան | 3190 |
| Հունական աղցան | 2860 |
| Ֆրեսկո | 3190 |
| Պղպեղի սոուսով աղցան | 2640 |
| Ռոստբիֆ | 3520 |
| Կապրեզե | 4070 |
| Քինոայով և մոցարելլայով աղցան | 3080 |
| Բաբելոն | 4070 |
| Տաք աղցան՝ մսով և բանջարեղենով | 3850 |
| Բազուկով և դդումով աղցան | 1650 |
| Պեկինյան աղցան | 2640 |
| Ավելուկով աղցան | 1320 |
| Միջօրե | 2420 |
| Ամառային աղցան | 1540-2200 |

| | |
|---|---|
| Լոլիկով և ռեհանով աղցան | 1320 |
| **ԱՊՈՒՐՆԵՐ** | |
| Դդումով կրեմ-ապուր | 1980 |
| Նռանե | 1870 |
| Սիբիրյան ապուր | 1540 |
| Ավելուկով ապուր | 1320 |
| Բրոկկոլիով կրեմ-ապուր | 2530 |
| Լոլիկով կրեմ-ապուր | 1980 |
| Սնկով կրեմ-ապուր | 1980 |
| Սոլյանկա | 2200 |
| Բորշչ | 1540 |
| Սպանախով կրեմ-ապուր | 2420 |
| Լագման | 2420 |
| Ծովամթերքով ապուր | 5280 |
| Իշլի Քյուֆթայով սպաս | 2200 |
| **ՏԱՔ ՈՒՏԵՍՏՆԵՐ** | |
| Նարնջագույն Դուետ | 3080 |
| Տավարի ֆիլե սոուսով | 4950 |
| Կորատելլա | 2640 |
| Ֆիլե մինյոն կոնյակի սոուսով | 8250 |
| Յորթի մաչա | 17600 |
| Բանջարեղենի տապակա | 2200 |
| Իշլի Քյուֆթա | 3080 |
| Էրզրումի Ղափամա | 3960 |
| Լավաշով Ղափամա | 3850 |
| Գառան չալաղաջ բրոկկոլիի խյուսով | 7480 |
| Գառան չալաղաջ նարնջի հյութով | 6930 |
| Գառան թիակ ֆիրմային բաղադրատոմսով | 15400 |
| Յավի թևիկներ եվրոպական ձևով | 2750 |
| Տապակած ճուտ | 2750 |
| Սթյու դի Մանգո | 4840 |
| Օսսոբուկո խավարտով | 5280 |
| Մեդալյոններ սպանախով | 5500 |
| Կաղամբով տոլմա | 2750 |
| Թփով տոլմա | 2750 |
| Բաց տոլմա | 2860 |
| Բիգ Միթ | 4950 |
| Պորկետտա | 3410 |
| Տապակա խոզի մսով և բանջարեղենով | 2860 |
| Բեֆստրոգանով սնկով | 3630 |
| Տավարի մատներ գինու սոուսում | 6050 |
| Յորթի մատներ բանջարեղենով | 5280 |
| Կարտոֆիլ սոխի չիպսով և պանրի սոուսով | 2530 |
| Ֆիրմային ռագու հորթի մսով | 16500 |
| Խինկալի /4 հատ/ | 1540 |
| Խինկալի տապակած /4 հատ/ | 1760 |
| Տապակած պելմենի ձվով | 1980 |

| | |
|---|---|
| Կանաչիով պելմենի | 2420 |
| Տապակած ճապոնական գյոզա՝ տավարի մսով | 3190 |
| Պելմենի | 1760 |
| **ՁԿՆԱՅԻՆ ՈՒՏԵՍՏՆԵՐ** | |
| Սաղմոն վայրի բրնձով | 10450 |
| Սաղմոնի սթեյք ռոքֆորի սոուսով | 7700 |
| Իշխան կարտոֆիլի չիպսով | 5280 |
| Իշխան խորոված (ամբողջական) | 4400 |
| Կարմրախայտ շոգեխաշած | 4400 |
| Իշխան շոգեխաշած (ամբողջական) | 4400 |
| Սաղմոնի սթեյք սոյայի սոուսով | 7150 |
| Սևանի սիգ խորոված (1 կգ) | 9350 |
| Թառափ խորոված (ստերլետ) 1կգ | 11000 |
| Թառափ խորոված (ստերլետ) 2 կտ | 3960 |
| **ԳՐԻԼ** | |
| Տավարի սուկի | 5830 |
| Սթեյք մաչետե | 5830 |
| Մարմարե ռիբայ | 9570 |
| Ֆլանկ սթեյք | 7920 |
| Պրայմ ռիբայ | 18590 |
| Պրայմ T-Bone ոսկորով | 17490 |
| **ԳՐԻԼԼ ԽԱՎԱՐՏ** | |
| Գրիլ բանջարեղեն հոսպերում | 1100 |
| Ջեռոցում պատրաստված կարտոֆիլ | 1100 |
| Շագանակագույն բրինձ | 1100 |
| Տապակած սպանախ կրեմետտե պանրով և նուշով | 1100 |
| **ԳՐԻԼԼ ՍՈՈՒՍՆԵՐ** | |
| Պղպեղ միքս | 660 |
| Սնկով սերուցքային սոուս | 660 |
| Բլյու չիզ | 660 |
| Չիմիչուրի | 660 |
| Լոլիկով կծու սոուս | 660 |
| **ԽՈՐՈՎԱԾ** | |
| Գառան չալաղաջ խորոված | 4400 |
| Գառան խորոված | 3850 |
| Յորթի խորոված | 4400 |
| Տավարի սիրտ, թոք խորոված | 2640 |
| Խոզի փափկամսի խորոված | 3850 |
| Տավարի սուկիի խորոված | 4950 |
| Խոզի չալաղաջ խորոված | 4400 |
| Խոզի մատներ խորոված | 4180 |
| Յավի խորոված | 2750 |
| Խոզի վիզ խորոված | 4180 |
| Գառան մշո քյաբաբ | 1980 |

| | |
|---|---|
| Տավարի մշո քյաբաբ | 1650 |
| Էրեբունի | 2420 |
| Սունկ խորոված | 1540 |
| Բանջարեղենի խորոված | 1980 |
| Պանրի խորոված | 1540 |
| Կարտոֆիլի խորոված | 660 |
| **ՊԱՍՏԱ / ՌԻԶՈՏՈ** | |
| Կարբոնարա | 3630 |
| Ռիզոտո ծովամթերքով | 7480 |
| Ռիզոտո բանջարեղենով | 4180 |
| Ռիզոտո տանձով | 3520 |
| Պեննե հավի մսով | 3520 |
| Ռիզոտոի գնդիկներ | 3520 |
| **ԽԱՎԱՐՏՆԵՐ** | |
| Ծնեբեկ | 7150 |
| Տապակած սիբեխ | 2750 |
| Տապակած մանդակ | 2750 |
| Ձվով տապակած կանաչ լոբի | 1760 |
| Տապակած կանաչ ոլոռ | 1320 |
| Հնդկաձավար | 880 |
| Կարտոֆիլի խյուս | 880 |
| Բրինձ | 880 |
| **ԽԱՉԱՊՈՒՐԻ** | |
| Աջարական խաչապուրի | 1760 |
| Գյուղական խաչապուրի | 2200 |
| Մեգրելական խաչապուրի | 3080 |
| Թոնրի խաչապուրի | 2200 |
| **ԱՂԱՆԴԵՐ** | |
| Մրգի տեսականի | 8800 |
| Ամառային մրգի տեսականի | 7150 |
| Գավառի փախլավա | 1540 |
| ,Անիկերսե ֆիրմային | 3630 |
| Շոկոհոլիկ | 3520 |
| Կասատա անուշեղենով | 3190 |
| Դելիս ագնվամորիով | 2640 |
| Շերբեփ | 3520 |
| Կոտրված ծաղկաման | 3850 |
| Էսկիմո | 3850 |
| Շոկոլադե պաղպաղակ | 1650 |
| Անանուխով պաղպաղակ | 1980 |
| Խենթ Տարտ | 2420 |
| **ԶՈՎԱՑՈՒՑԻՉ ԸՄՊԵԼԻՔՆԵՐ** | |
| Մածնաբրդոշ սափորով | 1760 |
| Թան սափորով | 1540 |
| Տնական լիմոնադ սափորով | 3850 |
| Տնական կոմպոտ սափորով | 1760 |
| Տոնիկ | 1320 |

| | |
|---|---|
| Նռան թարմ քամած հյութ | 3850-4400 |
| Թարմ քամած հութեր | 1100-2320 |
| Ռեդ Բուլլ | 2200 |
| Պեպսի, Միրինդա | 440 |
| Սան Պելլեգրինո | 1320 |
| Պերյե | 1320 |
| Հանքային ջուր 0.33 լ | 440 |
| Աղբյուրի ջուր 0.33 լ | 440 |
| **Ընդամենը** | **621950** |

«Պանդոկ Երևան»

ՀՀ դրամ

| | |
|---|---|
| **Թոնիր** | |
| Թոնրի խորովածի տեսականի | 25410 |
| Թոնրի սիգ (1 կգ) | 8800 |
| Թագ | 15400 |
| Պուլիկ | 7700 |
| **ՆԱԽՈՒՏԵՍՏՆԵՐ** | |
| Մսի տեսականի «Ֆիրմային» | 4400 |
| Խոզի ֆիլե «Ֆիրմային» | 2750 |
| Խորվու (1 բաժին) | 3850 |
| Ղավուրմա | 4180 |
| Պանրի տեսականի | 2860 |
| Գյուղական պանիր | 1980 |
| Ձկան տեսականի | 8800 |
| Հայկական ձկան տեսականի | 7700 |
| Բանջարեղենային սառնուտեստ | 1870 |
| Ռեժան | 990 |
| Քամած մածուն | 880 |
| Լոլով գնդիկներ ընկույզի փաթիլներով | 1320 |
| Հումուս | 1320 |
| Բանջարեղենի տեսականի | 2860 |
| Ձիթապտուղ | 1100 |
| Տնական թթու | 1320 |
| Թարմ կանաչի | 1320 |
| Հաց | 440 |
| **ԱՂՑԱՆՆԵՐ** | |
| Կովսական աղցան | 2090 |
| Հունական աղցան | 2640 |
| Կեսար սաղմոնով | 3740 |
| Արցախ աղցան | 2200 |
| Կեսար աղցան | 2750 |
| Արարատյան աղցան | 1430 |
| Միջօրե աղցան | 19800 |
| Ամառային աղցան | 1320-1980 |
| Լցոնած սմբուկ | 2090 |
| Ոլորան | 2090 |
| Ավելուկով աղցան | 1100 |

| | |
|---|---|
| Ավելուկը մածունով | 1320 |
| Դրաշք աղցան | 1760 |
| Հավով աղցան | 1650 |
| Բրոկկոլի սնկով աղցան | 1650 |
| Կաղամբով աղցան | 770 |
| Կարմիր լոբով աղցան | 990 |
| Գալերեա աղցան | 1540 |
| Թաբուլե | 1320 |
| Հայաստան աղցան | 1980 |
| **ԱՊՈՒՐՆԵՐ** | |
| Հավով ապուր | 1210 |
| Սպաս | 880 |
| Լագման | 2200 |
| Սնկով ապուր | 1210 |
| Նռանե | 1650 |
| Սիսիրյան ապուր | 1320 |
| Լոբով ապուր | 990 |
| Սոլյանկա | 1650 |
| Բորշչ | 1210 |
| Չանախ | 1650 |
| Դդումով և կարմիր լոբով ապուր | 990 |
| Ավելուկով ապուր | 990 |
| Հարիսա | 1100 |
| Խարչո | 1540 |
| Խաշ | 2530 |
| Պուտուկ | 1650 |
| Դդումով կրեմ-ապուր | 1320 |
| **ՏԱՔ ՈՒՏԵՍՏՆԵՐ** | |
| Հորթի բիակ հաճարի փլավով | 26260 |
| Հորթի չալաղաջ արիշտայով | 16500 |
| Թարխունով գառան բիակ | 9900 |
| Ջեռոցում տապակած հորթի մատներ | 6600 |
| Ղափամա | 19800 |
| Էրզրումի ղափամա | 8800 |
| Քարահունջ | 6050 |
| Խուրջին | 5500 |
| Նապաստակ փռի մեջ | 8800 |
| Աքլորով շիլա | 7700 |
| Տոլմա «Երևան» | 2420 |
| Խաղողի թփով տոլմա | 2420 |
| Կաղամբով տոլմա | 2420 |
| Մշո տոլմա | 2420 |
| Գառան խաշլամա | 3520 |
| Հորթի խաշլամա | 3300 |
| Թավա քյուֆթա | 2860 |
| Իշլի քյուֆթա | 2860 |
| Քյուֆթա | 2640 |
| Չախոխբիլի աքլորով | 7700 |
| Չախոխբիլի նապաստակի մսով | 8800 |
| Ջավախք | 2420 |
| Տավարի տժվժիկ | 1980 |

| | |
|---|---|
| Գառան տժվժիկ | 1980 |
| Շեֆ-լանգետ | 4180 |
| Տապակած ճուտ | 2200 |
| Մեդալիոն | 2750 |
| Իտալական միս | 3850 |
| Ժուլյեն | 2200 |
| Հավի թևիկներ սոուսի մեջ | 2200 |
| Բիֆ ստրոգանոֆ սնկով | 3300 |
| Բիֆ ստրոգանոֆ | 2860 |
| Սուլուգունի տապակած | 1650 |
| Տապակա խոզի մսով | 2200 |
| Տապակած սունկ կարտոֆիլով | 1210 |
| Սնկով և հաճարով փլավ | 1320 |
| Օջախուրի | 2530 |
| Կուպատի մոշի սոուսով | 2530 |
| **ԽՄՈՐ** | |
| Խինկալի տապակած (1 հատ) | 330 |
| Խինկալի (1 հատ) | 280 |
| Պելմենի (10 հատ) | 1430 |
| Պելմենի ծվով տապակած | 1650 |
| **ՁԿՆԱՅԻՆ ՈՒՏԵՍՏՆԵՐ** | |
| Ձերմուկի կարմրախայտ շոգեխաշած (1 հատ) | 3960 |
| Իշխան շոգեխաշած (1 հատ) | 3960 |
| Ստերլետ խորոված (1 կգ) | 9900 |
| Սաղմոնի սթեյք ռոքֆորի սոուսով | 7150 |
| Իշխան գավառական | 3960 |
| Սաղմոնի սթեյք սոյայի սոուսով | 6600 |
| Իշխան խորոված (1 հատ) | 3960 |
| **ԽՈՐՈՎԱԾ** | |
| Խոզի չալաղաջ խորոված | 3960 |
| Խոզի փափկամիս խորոված | 3520 |
| Խոզի վիզ խորոված | 3630 |
| Խոզի մատ խորոված | 3630 |
| Հորթի խորոված | 4070 |
| Տավարի սուկի խորոված | 4400 |
| Տավարի սիրտ, թոք խորոված | 2200 |
| Գառան խորոված | 3520 |
| Գառան մատ խորոված | 3630 |
| Հավի խորոված | 2200 |
| Գառան իքիմիր | 1760 |
| Գառան փարդա | 1760 |
| Տավարի քյաբաբ | 1210 |
| Գառան քյաբաբ | 1430 |
| Հավի քյաբաբ | 1100 |
| Կարտոֆիլի քյաբաբ | 770 |
| Կարտոֆիլ խորոված | 660 |
| Սունկ խորոված | 1320 |
| Սուլուգունի խորոված | 1430 |

| | |
|---|---|
| Բանջարեղեն խորոված | 1540 |
| Էրեխունի | 1810 |
| **ՁԿԱՃԵՂ** | |
| Ակնիկ | 660 |
| Կանաչ ոլոռով ձվածեղ | 1320 |
| Ձվածեղ | 660 |
| Լոլիկով ձվածեղ | 1100 |
| Բաստուրմայով ձվածեղ | 1650 |
| **ԽԱՎԱՐՏՆԵՐ** | |
| Կարտոֆիլի խյուս | 660 |
| Արիշտա | 990 |
| Բրինձ | 660 |
| Մանդակ տապակած | 2420 |
| Սիսեխ տապակած | 2420 |
| Յնդկաձավար | 660 |
| Կանաչ լոբի տապակած | 1430 |
| Կանաչ ոլոռ | 1210 |
| **ԽԱՉԱՊՈՒՐԻ** | |
| Իմերեթական խաչապուրի | 2200 |
| Մեգրելական խաչապուրի | 2640 |
| Աջարական խաչապուրի | 1320 |
| Կալցոնե | 1320 |
| **ՊԻՑՑԱ** | |
| Ասորտի | 3080/2090 |
| Բոլոնիա | 2750/1760 |
| Բուսական | 2310/1430 |
| Որսորդական | 2640/1650 |
| Մարգարիտա | 1980/1210 |
| Ռավեննա | 2750/1760 |
| Կարբոնարա | 2530/1650 |
| Պալերմո | 2530/1540 |
| Պանդոկ Երևան | 2750/1760 |
| Միլանո | 2420/1430 |
| **ԱՂԱՆԴԵՐ** | |
| Ֆիրմային փախլավա | 1320 |
| Գավառի փախլավա | 1320 |
| Թոնրի գաթա | 1760 |
| Մրգի տեսականի «էկզոտիկ» | 7150 - 13200 |
| Մրգի տեսականի «Ամառային» | 6050 |
| Մրգի տեսականի (փոքր) | 4950 |
| Մուրաբա | 1320 |
| Պաղպաղակ (վանիլային/շոկոլադե) 150գ | 550 |
| **Ընդամենը** | **557120** |

«Սմոքինգ Շեֆ»

ՀՀ դրամ

| | |
|---|---|
| **ՍԱՌԸ ԽՈՐՏԻԿՆԵՐ** | |
| Թարմ թխված ֆոկաչչա, փափուկ սպիտակ հացի ռոլեր, ամբողջական ցորենի տնական հաց և սև հաց | 1540 |
| Պանրի ափսե | 7150 |
| Մսի ափսե | 8250 |
| Պրոշուտտոյով փաթաթված գրիսսինի ձողիկներ | 1980 |
| Կրոստինի լոմո | 2200 |
| Կրոստինի սաղմոնով | 2640 |
| **Աղցաններ** | |
| Աղցան գրիլ հավի կրծքամսով և ավոկադոյով | 3520 |
| Սթեյք աղցան | 3960 |
| Աղցան ծովախեցգետնով | 3960 |
| Քինոայով աղցան | 2640 |
| **Գրիլ հաուս** | - |
| **Թռչնամիս** | |
| Գրիլ հավի կրծքամիս՝ հոսպերում պատրաստված կարտոֆիլով | 3410 |
| Տեղական տավարի միս | |
| Բիֆ անտրեկոտ | 17600 |
| Ռիբայ ոսկորով | 10450 |
| Տավարի սուկի | 5830 |
| **Անգուս** | |
| Պրայմ T-Bone ոսկորով, | 17490 |
| Ֆիլե մինյոն (արգենտինական) | 17490 |
| Պրայմ Անգուս ռիբայ (ցուլ) | 18590 |
| **Գառ** | |
| Գառան անտրեկոտ | 13200 |
| **Խոզ** | |
| Խոզի անտրեկոտ | 6050 |
| **Ձուկ** | |
| Գրիլ սաղմոնի ֆիլե | 7700 |
| Գրիլ իշխանի ֆիլե | 5060 |
| **Սենդվիչներ** | |
| Բուրգեր Smoking Chef | 2860 |
| Տակո տավարի մսով, ռուկոլայով, սոխի չիպսով, բարբիքյու սոուսով, գուակամոլե սոուսով և քոուլ-սլոու աղցանով | 3080 |
| **Տաք ուտեստներ** | |
| Սաղմոն անչոուսի սոուսով | 7150 |
| Բադի միս քաղցր չիլի սոուսով | 6600 |
| Ռիզոտտո անգուսի մաչետեով | 2750 |
| Իշխանի ֆիլե ռոլ | 4620 |
| Տալիոլինի ծովախեցգետնով | 4620 |
| **Ուտեստներ կիսվելու համար** | |
| Միդիա շաֆրանի ծաղիկով և կուրկումայով | 5280 |
| Սաղմոնի թարթար մանգոյով, բազուկով, ավոկադոյով և գետնանուշով | 3960 |
| Հորթի սուկիի թարթար սև ծիթապտղի փոշիով, թարթար սոուսով և ռուկոլայով | 3520 |
| Անգուսի բրեզաոլան կարպաչչո ոճով՝ ռուկոլայով և պարմեզանով | 3960 |

| | |
|---|---|
| Ապուրներ | |
| Ծովամթերքով ապուր | 3190 |
| Ծնեբեկով և բրոկկոլիով կրեմ-ապուր | 2640 |
| Սոյա Բիֆ ապուր | 2640 |
| Զուպպա դի Ֆունգի կրեմ–ապուր | 1540 |
| Մուսկատ դե Պրովանս կրեմ–ապուր | 1540 |
| Խավարտ | |
| Տապակած սպանախ կրեմետտե պանրով և նուշով | 2420 |
| Հոսպերում պատրաստված սունկ | 1420 |
| Ջեռոցում պատրաստված կարտոֆիլ | 1420 |
| Գրիլ բանջարեղեն հոսպերում | 1640 |
| Շագանակագույն բրինձ | 1100 |
| Կարտոֆիլի խյուս | 660 |
| Աղանդեր | |
| Փարիզ-Բրեստ մրգային | 2640 |
| Պրոֆիտրոլներ | 2420 |
| Ֆրամբուազիե | 2200 |
| Պավլովա | 2860 |
| Պավլովա Շոու | 17160 |
| Շոու շոկոմանների համար | 20460 |
| Ալկոհոլ | |
| Օղի | |
| Գրեյ Գուս օրիգինալ 50մլ | 3410 |
| Օհանյան Այս 50մլ | 1320 |
| Արցախ ծիրանի 50մլ | 1760 |
| Ֆինլանդիա 50մլ | 1320 |
| Կոնյակ | |
| Հեննեսի X.O. 50մլ | 17050 |
| Արարատ Շառլ Ազնավուր 50մլ | 15400 |
| Արարատ Դվին 50մլ | 7700 |
| Արարատ Ախթամար 50մլ | 2750 |
| Գինի | |
| Կատարո | 10980 |
| Կուր | 9350 |
| Հին Արենի | 6930 |
| Կարաս | 900 |
| Վան Արդի | 8250 |
| Գարեջուր | |
| Դարգեթ/Հեինիկեն/Կորոնա 0.33լ | 1760 |
| Տաք ըմպելիք | |
| Ամերիկանո | 1210 |
| Սուրճ արևելյան | 770 |
| Խոտաբույսերով թեյ | 1320 |
| Զովացուցիչ ըմպելիք | |
| Աղբյուրի/հանքային ջուր | 550 |
| Պեպսի | 550 |
| Բնական հյութեր | 770 |
| ***Ընդամենը*** | **371110** |

*Հավելված N 2*
*«11» Փետրվարի 2022թ. կնքված*
*ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-22/24 ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 79111200/1 | Ներկայացուց-չական ծառայություններ /4237/ | 1250000 | 1250000 | 1250000 | 2500000 | 2500000 | 2500000 | 3750000 | 3750000 | 3750000 | 5000000 | 5000000 | 5000000 | 5000000 |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԱԺ աշխատակազմ
ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19
ՀՎՀՀ 00008519
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011020089
ՀՀ ԱԺ աշխատակազմի
ղեկավար – գլխավոր քարտուղար՝
Վահան Նարիբեկյան

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«ՀԱՅՐ ԵՎ ՈՐԴԻ ԵՐԵՄՅԱՆՆԵՐ» ՍՊԸ
ՀՎՀՀ 01557735
Արդշինբանկ ՓԲԸ
Հ/Հ՝ 2470063177280020
Գլխավոր տնօրեն՝
Դավիթ Երեմյան

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ.